ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 182 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԶԻ (ԳՈՐԿՈՒ) ՓՈՂՈՑԻ N 30 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի զ) և թ) կետերով և նկատի ունենալով «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Անտոնիո Մոնտալտոյի գրավոր խնդրանքը (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թբականի դեկտեմբերի 08-ին թիվ 12813 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական 2020825) Շիրազի (Գորկու) փողոց N 30 հասցեի պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող 434,02 (չորս հարյուր երեսունչորս ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական շինությունը և շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 0,035028(զրո ամբողջ երեսունհինգ հազար քսանութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը 30 (երեսուն) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամին՝ շենքը ամրակայելու, վերականգնելու և մշակութային նպատակներով օգտագործելու համար:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված պատմական և մշակութային արժեք ունեցող հասարակական շինությունը ամրակայել, վերականգնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի № 438 որոշմամբ հաստատված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերանորոգման, վերականգնման և օգտագործման» կարգի համաձայն:
3. Հանձնարարել Գյումրի համայնքի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ «Գյումրու ընկերներ»

մշակութային հիմնադրամի հետ կնքել հուշարձանի պահպանական պարտավորագիր և պարտավորագրի մեկ օրինակը ներկայացնել լիազոր մարմնին:

4. Օրենքով սահմանված կարգով «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված ամշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ. Կարապետյան _____		
Տ.Հովհաննիսյան _____		
Վ. Հունանյան _____		
Ն. Մեսրոպյան _____		
Ռ.Մխիթարյան _____		
Է. Մկրտչյան _____		
Վ.Շիրինյան _____		
Ե. Պողոսյան _____		
Մ. Սահակյան _____		
Տ. Փանոսյան _____		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.